

# Արտոնագրման արագացում գործընթաց՝ փախստականներու, ապաստանեալներու եւ ներգաղթային յատուկ վիզաներ ունեցողներու համար

Ապառուներու հարցերու բաժանմունքը (DCA) եւ անոր խորհուրդներն ու գրասենեակները կը պաշտպանեն եւ կը ծառայեն Քալիֆորնիոյ սպառողներուն՝ տարբեր մասնագիտութիւններու եւ աշխատանքներու արտոնագրման եւ արտոնագրուածներու կարգաւորման միջոցով, սկսած հաշուապահէն մինչեւ բժիշկ, պահակէն մինչեւ կապալառու, գերեզմանատան պատասխանատուէն մինչեւ անասնաբուժ, եւ անլին:

13 յունուար 2021-էն սկսեալ, հետեւեալ բաժիններու անհատները կրնան իրենց դիմումները արագացնել՝ իրենց մասնագիտութեան DCA խորհուրդին կամ գրասենեակին կողմէ:

- Փախստականներ՝ համաձայն Միացեալ Նահանգներու օրէնսգիրքի 8-րդ վերնագրի 1157-րդ բաժինին:
- Անոնք, որոնք ապաստան ստացած են Ամերիկայի Միացեալ Նահանգներու ներքին ապահովութեան նախարարութեան քարտուղարին կամ Միացեալ Նահանգներու գլխաւոր դատախազին կողմէ՝ համաձայն Միացեալ Նահանգներու օրէնսգիրքի 8-րդ վերնագրի 1158-րդ բաժինին:
- Ներգաղթային յատուկ վիզա ունեցող անձեր, որոնց կարգավիճակ տրուած է համաձայն 110-181 Հանրային օրէնքի 1244-րդ յօդուածին, 109-163-ի Հանրային օրէնքին, կամ 111-8 Հանրային օրէնքի F բաժինի VI վերնագրի 602(b)-րդ յօդուածին:

Արագ արտոնագրման նկատի առնուելու համար, դիմորդները պէտք է ապացոյց ներկայացնեն իրենց փախստականի, ապաստանեալի կամ ներգաղթային յատուկ վիզայի կարգավիճակի մասին՝ իրենց դիմումի փաթեթը ներկայացուցած ատեն: Փաստաթուղթերու օրինակները կը ներառեն:

- Ձեւաթուղթ I-94, Ժամանումի/մեկնումի արձանագրութիւն՝ ընդունելութեան դասի «RE» (Փախստական), «AY» (Ապաստանեալ) ծածկագիրներով, կամ անձը որպէս փախստական կամ ապաստանեալ բնութագրող այլ տեղեկութիւններ:

- Ներգաղթային յատուկ վիզա, որ կը ներառէ «SI» կամ «SQ» դասակարգման ծածկագիրերը:
- Մշտական բնակութեան քարտ (Ձեւաթուղթ I-551), որ սովորաբար յայտնի է որպէս «կանաչ քարտ», բնութագրուած, թէ անձը ընդունուած է որպէս փախստական կամ ապաստանեալ:
- Հրաման մը՝ լիազօրուած իրաւասութիւն ունեցող դատարանի մը կողմէ, կամ այլ փաստաթղթային ապացոյց, որ հիմնաւոր կերպով կ'երաշխաւորէ, որ դիմորդը արագացում արտոնագրման իրաւասու է:

Փաստաթուղթեր չտրամադրելը կրնայ պատճառ դառնալ, որ դիմումի ուսումնասիրութեան արագացման գործընթացը ուշանայ: Հաճեցէք նկատի առնել, թէ արտոնագրման արագացում գործընթացը չի նշանակեր, որ արտոնագիր մը կամ գրանցում մը պէտք է տրուի, այլ կը նշանակէ, որ գործընթացը պիտի արագացուի:

**Յաւելեալ տեղեկութիւններու համար կապուեցէ՛ք մասնագիտութեան արտոնագրման խորհուրդին կամ գրասենեակին, ե-նամակ՝ [refugee@dca.ca.gov](mailto:refugee@dca.ca.gov), կամ այցելեցէ՛ք DCA-ի արագացում արտոնագրման կայքէջը: Եթէ անգլերէնէն բացի այլ լեզուով օգնութեան կարիքը ունիք, լեզուական աջակցութեան ծառայութիւններ կը տրամադրուին անվճար: Հեռաձայնեցէ՛ք DCA-ին անվճար՝ (833) 498-2006 թիւով:**

*Քալիֆորնիոյ Ընկերային Ծառայութիւններու բաժանմունքի (CDSS) Փախստականներու վերաբնակեցման ծրագիրը կ'օգնէ իրաւասու փախստականներուն, ապաստանեալներուն, ներգաղթային յատուկ վիզա ունեցողներուն եւ այլ իրաւասու անձանց՝ վերաբնակելու Քալիֆորնիոյ մէջ: Յաւելեալ տեղեկութիւններու համար CDSS-ի ծրագիրին մասին, այցելեցէ՛ք [www.cdss.ca.gov/refugee-services](http://www.cdss.ca.gov/refugee-services):*